ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան **12 նոյեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Զ.Ղուկասյանի
Կ. Բալայանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Այվազյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Ռուբեն Այվազյանը 28.10.2008թ. դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222 հոդվածի 1-ին կետի սահմանադրականությունը:

2. ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անձը կարող է կոնկրետ գործով իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը որոշելու խնդրանքով սահմանադրական դատարան դիմել միայն այն դեպքում, երբ սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները:

3. ՀՀ Դատական օրենսգրքի 50 հոդվածին եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222 հոդվածին համապատասխան՝ վերաքննիչ դատարանի որոշումները ենթակա են բողոքարկման ՀՀ վճռաբեկ դատարան: Դիմողի գործով ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել 19.06.2008թ., որը սակայն, օրենքի պահանջներին համապատասխան, չի բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան: Հետեւաբար, դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ

դիմումում մատնանշված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 17.09.2008թ. որոշումը չի կարող համարվել վերջնական դատական ակտ:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 9-րդ կետով, 69 հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 25 հոդվածի «զ» կետով՝ սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Ռուբեն Այվազյանի՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222 հոդվածի 1-ին կետի սահմանադրականությունը վիճարկելու մասին դիմումի հիման վրա գործի քննությունը մերժել: